ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՐՏԻ 2022թվականի N 26-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նստաշրջանի՝ մարտի 10-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:

3) Քաղաքացի Սերոբ Միհերի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.01 հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի կողմից 2022 թվականին ներկայացվող սուբվենցիայի ծրագրային հայտերին համաձայնություն տալու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՇԱՀԲԱՋՅԱՆ ՄԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՐՏԻ 2022թվականի N 27-Լ

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Եղեգնաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՇԱՀԲԱՋՅԱՆ ՄԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 10-ի
Թիվ 27-Լ որոշման

ԿԱՐԳ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման հետ կապված հարաբերությունները:
2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմը պարտավոր է պահել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման միասնական էլեկտրոնային մատյան (այսուհետ՝ մատյան):
3. Մատյանում ըստ հերթականության լրացվում են՝
   1) նորմատիվ իրավական ակտի հաշվառման հերթական համարը.
   2) նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը.
   3) նորմատիվ իրավական ակտի տեսակը.
   4) նորմատիվ իրավական ակտի վերնագիրը.
   5) նորմատիվ իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
   6) նորմատիվ իրավական ակտի հերթական համարը.
   7) նորմատիվ իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
   8) նորմատիվ իրավական ակտի հրապարակման, դրա ուժի մեջ մտնելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
   9) նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը:
   10) նորմատիվ իրավական ակտի նախագիծը պետական-իրավական փորձաքննության ուղարկելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը,

11) նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին պետական-իրավական փորձագիտական եզրակացություն տալու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, իսկ օրենքով սահմանված ժամկետներում փորձագիտական եզրակացություն չտրամադրելու դեպքում՝ նշում այդ մասին:

4.Պետական-իրավական փորձաքննության ոչ ենթակա համայնքային բյուջեների վերաբաշխման, դրանում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը միասնական էլեկտրոնային մատյանում հաշվառելիս սույն կարգի 3-րդ կետի 10-րդ և 11-րդ ենթակետերով պահանջվող տեղեկատվությունը չի նշվում:

5. Մատյաններում կարող են նախատեսվել նաև այլ նշումներ:

6. Մատյանի հաշվառման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

7. Մատյանում նշումները պետք է կատարվեն առանց կրճատումների:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը հաշվառվում, այնուհետև սահմանված կարգով արխիվացվում և պահպանվում են համայնքի աշխատակազմի արխիվում, իսկ սահմանված ժամկետների ավարտից հետո մշտական պահպանության է հանձնվում պետական կամ համայնքային արխիվ:

9. Սույն կարգը տարածվում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի հաշվառման և պահպանման վրա:

10. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման մատյանից տեղեկություններ կարող են տրամադրվել իրավաբանական և ֆիզիկական անձանց: Մատյանից գրավոր տեղեկություններ կարող են տրվել առձեռն, փոստով, ինչպես նաև էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

11. Մատյանից տեղեկություններ տալու համար համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և չափով կարող է գանձվել տեղական վճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՐՏԻ 2022թվականի N 28-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐՈԲ ՄՀԵՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.01 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի N 261 դրական եզրակացությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Քաղաքացի Սերոբ Միերի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության 0.15 հա այլ հողատեսքից /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0657/ 0.01 հա-ը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ կապի հողեր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունից առաջացած կադաստրային արժեքների տարբերության արդյունքում,

քաղաքացի Սերոբ Միհրի Մովսիսյանի կողմից, համայնքային բյուջե պետք է վճարվի 78 575 /յոթանասունութ հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՇԱՀԲԱՋՅԱՆ ՄԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՐՏԻ 2022թվականի N 29-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերությունը և այն հանգամանքը, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2022 թվականին Հայաստանի Հանրապետության բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ (սուբվենցիա)՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի կողմից 2022 թվականին ներկայացվող, համայնքի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերին.

1) Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Գլաձորյան փողոցի 380մ հատվածի, Կամոյի փողոցի 2-րդ նրբանցքի 210մ, Մոմիկի փողոցի I-ին նրբանցքի 270 մ, Կոմիտաս և Մյասնիկյան փողոցների ասֆալտապատում:

2) Եղեգնաձոր համայնքի՝ Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան փողոցի 130մ, Նարեկացի փողոցի 80 մ, Շահումյան փողոցի 120մ, Վ. Գևորգյան փողոցի 210մ, Մոմիկի և Նարեկացի փողոցների խաչմերուկի 60մ մայթերի ասֆալտապատում և Սրկողուն գետի վրա գտնվող /Անդրանիկ փողոց/ կամուրջին կից նոր մայթի կառուցում:

3) Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան 5, Մոմիկի 2 և 6, Սպանդարյան 2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում:

4) Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում:

5) Եղեգնաձոր համայնքի՝ Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի ջեռուցման համակարգի կառուցման և մասնակի վերանորոգման աշխատանքներ, Եղեգնաձոր բնակավայրի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի բակի բարեկարգման աշխատանքներ և Մալիշկա բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման և գազաֆիկացման աշխատանքներ:

6) Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Գլաձոր և Գետափ բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում:

7) Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում:

8) Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի ներհամայնքային փողոցի ասֆալտապատում:

9) Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի՝ Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված հայորդիների, Եղեգնաձոր բնակավայրի 1941-1945թթ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների և Դ. Դեմիրճյանի անվան զբոսայգում գտնվող Արցախյան առաջին պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիրներին կից տարածքների բարեկարգման աշխատանքներ:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան կազմել և Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված ծրագրերի ֆինանսավորման հայտերի ամբողջական փաթեթները:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով ներդրում կատարելու համար՝ համայնքի 2022 թվականի բյուջեում նախատեսված են բավարար ֆինանսական միջոցներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՇԱՀԲԱՋՅԱՆ ՄԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՐՏԻ 2022թվականի N 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել 2022 թվականի ապրիլի 12-ին, ժամը՝ 18:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՆԱՋԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

ՆԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՇԱՀԲԱՋՅԱՆ ՄԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**